# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2021/38**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Հովհաննիսյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 286.110.1021463),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1194-2021 գրությամբ «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//318-2021 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1194-2021 գրությամբ նախաձեռնել է «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ պաշտպանության նախարարության գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Էլ նորաձեվության երազանք» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/38 ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 26.01.2021թ.-ի գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/58 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Պատվիրատուի և Մասնակցի միջև 15.10.2021թ.-ին կնքվել է ԳՀԱՊՁԲ-20-7/58-1 ծածկագրով պայմանագիր:

1.2. Մասնակցի միակ աշխատակից Լուսինե Հովհաննիսյանի ամուսինը՝ Ներսիկ Դավթյանը 2020 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 9 մասնակցել է մարտական գործողություններին:

1.3. Համաձայն Պայմանագրի 8.1. կետի 2-րդ պարբերության. «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը»:

1.4. Պայմանագիրը բացակայում է armeps.am/ppcm համակարգում:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Ինչպես հայտնի է, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նույն թվականի նոյեմբերի 10-ն, ադրբեջանը սանձազերծել էր պատերազմ: Չնայած նրան, որ պատերազմն Արցախի հանրապետության տարածքում էր, Հայաստանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և հայ ժողովուրդը այդ պատերազմին ունեցել են անմիջական մասնակցություն: Այդ պատերազմին նաև մասնակցել է Մասնակցի տնօրեն և միակ աշխատակից Լուսինե Հովհաննիսյանի ամուսինը Ներսիկ Դավթյանը: Հասկանալի պատճառներով Լուսինե Հովհաննիսյանի մտածմունքը պատերազմի ժամանակահատվածում եղել է պատերազմական գործողությունները: Բայց և այնպես, վերջինս լինելով փորձառու դերձակ և պատերազմական գործողությունների ժամանակ փորձելով իր լուման ներդնել հայոց բանակի հաղթանակի գործում, կարել և նվիրել է բանակային անձրևանոցներ, քնապարկեր և կոմբինիզոններ:

Այսպես, մինչև Պայմանագիրը միակողմանի լուծելը Մասնակցի միակ աշխատակիցը լծված էր բանակին օգտակար լինելու գործով: Բացի այդ, վերջինիս մտածմունքը նաև ամուսինն էր, քանի որ նա անմիջական մասնակցում էր պատերազմական գործողություններին: Եվ, հետևաբար Պայմանագրի ընթացքին հետամուտ չլինելը պայմանավորված էր այդ հանգամանքներով:

Սակայն նշենք, որ պատերազմական գործողությունների ավարտից հետո Լուսինե Հովհաննիսյանը գնացել է ՀՀ պաշտպանության նախարարություն և փորձել է ճշտել, թե հնարավոր է արդյոք այդ ժամանակ մատակարարել Պայմանագրով սահմանված ապրանքները: Սակայն չի կարողացել մուտք գործել ՀՀ պաշտպանության նախարարություն, քանի որ այդ օրերին նախարարության մուտքի մոտ բազմամարդ էր: Այդ հարցին չի հաջողվել ստանալ պատասխան նաև հեռախոսազանգով կապ հաստատելու միջոցով:

Վերոգրյալից երևում է, որ պատերազմական գործողությունների ժամանակահատվածում ապրաքները չմատակարարելը պայմանավորված է եղել նաև հենց պատերազմով:

Հարկ ենք համարում նշել, որ ժամանակ տրամադրելու դեպքում Մասնակիցը պատրաստ է Պատվիրատուին մատակարարել Պայմանագրով սահմված ապրանքները և երբևէ միտում չի ունեցել խախտելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պետական բյուջեի (...) միջոցների հաշվին գնման պայմանագիր կնքելուց (...) հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ գնման գործընթացի մասին:»

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 105-րդ և 106-րդ կետերի համաձայն. «105. Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պատվիրատուի ղեկավարն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով լիազորված մարմին է ներկայացնում գնման գործընթացի մասին հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն), որի ձևը, հաշվետվության հիման վրա գործարքների հաշվառման կարգը, ինչպես նաև այն դեպքերը, երբ պայմանագրի պատճենը հաշվետվության անբաժան մասն է, սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

106. Հաշվետվությունը լիազորված մարմնին չներկայացնելը կամ նրա կողմից ներկայացված հաշվետվության մեջ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելը կամ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ պատվիրատուի կողմից ներկայացված պարզաբանումը չընդունելը հանգեցնում են տվյալ գնման պայմանագրի ֆինանսավորման կասեցմանը՝ մինչև արձանագրությունը կամ ընդունելի պարզաբանումը ներկայացնելը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունումը:»

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 345-Ն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի «Լիազոր մարմին ներկայացվող հաշվետվության հիման վրա գործարքների հաշվառման կարգ»-ի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն. «2. Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնման գործարքը հաշվառելու նպատակով պատվիրատուի ղեկավարը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում, գործարքի հաշվառման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով լիազորված մարմին է ներկայացնում գնման գործընթացի մասին հաշվետվությունը, կցելով կնքված պայմանագրի (գործարքի) պատճենը:

5. Լիազորված մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում հաշվառում է գործարքը, եթե ներկայացված են սույն կարգի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացվելու դեպքում գործարքի հաշվառումը մերժվում է, (...):»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 33-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն. «33. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ 18) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ (...):»:

Գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման օգտվողի ուղեցույցի համաձայն գնման ընթացակարգերի վերաբերյալ հաշվետվությունները և պայմանագրերը պատվիրատուի կողմից ստեղծվում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատվում և հաշվառվում են armeps.am/ppcm համակարգով:

Վերոգրյալից հետևում է, որ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտականություններ առաջացնող գնման գարծարքը և այդ գործարքի վերաբերյալ կնքված պայմանագիրը հաշվառելու նպատակով պատվիրատուն ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն հաշվետվություն, որին պետք է նաև կցի այդ գործարքների վերաբերյալ կնքված պայմանագիրը:

Եթե պայմանագիը կցված չէ հաշվետվությանը, ապա այդ գնման գործարքի ֆինանսավորումը կասեցվում է: Բացի այդ, պետական բյուջեի միջոցների հաշվին պարտականություններ առաջացնող պայմանագրերում սահմանված է, որ. «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը»:

Այսինքն, եթե հաշվետվությանը կցված չէ գնման գործարքի վերաբերյալ կնքված պայմանագիրը, ապա տվյալ գնման գործարքի գծով ֆինանսավորումը պետք է կասեցվի, իսկ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքները և պարտականությունները ենթակա չեն կատարման: Ընդորում, էլեկտրոնային գնումների ժամանակ հաշվետվությունը և պայմանագիրը հաշվառման նպատակով ներկայացվում է ՀՀ

ֆինանսների նախարարություն armeps.am/ppcm համակարգի միջոցով: Հետևաբար, եթե պայմանագիրը կցված չէ armeps.am/ppcm համակարգում, ապա այդ պայմանագրով սահմանված պարտականությունները և իրավունքները ենթակա չեն կատարման:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Պայմանագիրը կցված չէ armeps.am/ppcm համակարգին, հետևաբար նաև հաշվառված չէ ՀՀ ֆինանսնաերի նախարարության կողմից: Ուստի, նշյալ պայմաններում Պայմանագրով սահմանված կողմերի՝ Մասնակցի և Պատվիրատուի իրավունքները ու պարտականությունները ենթակա չեն կատարման: Քանի որ ինչպես պարզեցինք վերոգրյալով, եթե գնման գործարքի պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված չէ, ապա այդ պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները կատարման ենթակա չեն:

Այսինքն, ի թիվս Պայմանագրով նախատեսված այլ պարատականությունների, Պայմանագրով ենթակա չէր կատարման ապրանքների մատակարարման Մասնակցի պարտականությունը: Որպիսի պայմաններում Մասնակիցը Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման պարտականությունը խախտած չէր կարող համարվել:

Բացի այդ, Պայմանագիրը ՀՀ ֆինանսներին նախարարության կողմից հաշվառված չլինելու պայմաններում ենթակա չէր կատարման նաև Պայմանագիրը միակողմանի լուծելու Պատվիրատուի իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ Պատվիրատուն իրավունք չուներ Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի հիմքով միակողմանի լուծել Պայմանագիրը իսկ Մասնակիցն էլ չի խախտել Պայմանագրով ստանձնած ապրանքների մատակարարման պարտականությունը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/38 ծածկագրով ընթացակարգը:

«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/38 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.01.2021թ. թիվ ՊՆ//318-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ նորաձևության երազանք» ՍՊ ընկերության միջև 15.10.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/58-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-20-7/58-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/38 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի միջև 15.10.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/58-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով

նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը՝ ոչ ուշ, քան 20.11.2020թ.:

3. «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-185 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի միջև 15.10.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/58-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2020թ. նոյեմբերի 20-ը պետք է մատակարարեր՝ 1575 լ-կ «կոստյում/բաճկոն և անդրավարտիք/ հոսպիտալային տաք» ապրանքատեսակը, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 25.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1194-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//318-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի միջև 15.10.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/58-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի

համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը՝ ոչ ուշ, քան 20.11.2020թ.:

«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-185 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի միջև 15.10.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/58-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2020թ. նոյեմբերի 20-ը պետք է մատակարարեր՝ 1575 լ-կ «կոստյում/բաճկոն և անդրավարտիք/ հոսպիտալային տաք» ապրանքատեսակը, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը»:

***<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 25.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ վկայակոչվել է հետևյալ հանգամանքը.

«Ինչպես հայտնի է, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նույն թվականի նոյեմբերի 10-ն, Ադրբեջանը սանձազերծել էր պատերազմ: Չնայած նրան, որ պատերազմն Արցախի հանրապետության տարածքում էր, Հայաստանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և հայ ժողովուրդը այդ պատերազմին ունեցել են անմիջական մասնակցություն: Այդ պատերազմին նաև մասնակցել է Մասնակցի տնօրեն և միակ աշխատակից Լուսինե Հովհաննիսյանի ամուսինը Ներսիկ Դավթյանը: Հասկանալի պատճառներով Լուսինե Հովհաննիսյանի մտածմունքը պատերազմի ժամանակահատվածում եղել է պատերազմական գործողությունները: Բայց և այնպես, վերջինս լինելով փորձառու դերձակ և պատերազմական գործողությունների ժամանակ փորձելով իր լուման ներդնել հայոց բանակի հաղթանակի գործում, կարել և նվիրել է բանակին անձրևանոցներ, քնապարկեր և կոմբինիզոններ:

Այսպես, մինչև Պայմանագիրը միակողմանի լուծելը Մասնակցի միակ աշխատակիցը լծված էր բանակին օգտակար լինելու գործով: Բացի այդ, վերջինիս մտածմունքը նաև ամուսինն էր, քանի որ նա անմիջական մասնակցում էր պատերազմական գործողություններին: Եվ, հետևաբար Պայմանագրի ընթացքին հետամուտ չլինելը պայմանավորված էր այդ հանգամանքներով»:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերության կողմից ներկայացվել է Ներսիկ Ռուդիկի Դավթյանի 2020թ. սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 25-ը զորակոչված լինելու վերաբերյալ տեղեկանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության, այն է՝ նախատեսված ապրանքը չմատակարարելը, պայմանավորված է եղել «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ի տնօրեն և միակ աշխատակից Լուսինե Հովհաննիսյանի ամուսնու՝ Ներսիկ Դավթյանի, զորակոչված լինելու հանգամանքով և դրա հետևանքով Լուսինե Հովհաննիսյանի հուզական վիճակով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***<u>քանի որ «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ն նման պայմաններում, այն է՝ ծագած անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորությունից:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1194-2021 գրությամբ «Էլ նորաձևության երազանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**